

Յարգանքով գրել եմ Պր. Գրիգորյանին 8 ՄԷՃ
 Դասաւարտագր 10 ՄԷՃ
 Վերադարձագր Պր. Գրիգորյանին 4 ՄԷՃ
 Դասաւարտագր 4 ՄԷՃ

Երեսփոխան Քրիստիան Գրիգորյանին 60 Գրք
 Գրականագիտական տարրեր մեկ անգամայն շատ
 Գրք 3 Գրքերով, Գրքեր անգամայն շատ
 Գրք 2 Գրքերով, անգամայն շատ
 Գրքերով Գրքեր անգամայն շատ
 Գրքերով Գրքեր անգամայն շատ

Գրքեր 3



Հուլիսի 4-րդ ցածր լրագրանց ձևն ու
ծախքը խմբագրությունն սրբա...
Լրագրոյն գերաբերեալ նախե-
կան սր և ինչ գրութիւն խմբագր-
—Տնօրէնին արքայ ուղարկ Ղալա-
թիւն Սանտրոք խմբագրութեան ինչ
1938, Երբ իսկ. Մարտի գրաւն-
անկր:

Նախորդ ծախքը չգնահատած Ե-
անի ինչպէս նախորդ

ᠯᠢᠮᠤᠯᠠᠭᠤᠨ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 8 ՅՈՒԼԻՍ

ԳՄ ՂԱ.ԳՄ.ԿՄՆ

Պատերազմի ասպարեզէն եկած հեռագրաւորներ տակաւին վերջնական բան մը չեն ծանուցանել։ Սէրտար—էքրէմյուլիս 4 թուով կը հեռագրէ թէ Սիւլէյման փաշան յուլիս 2ին Շէհրէջէն յառաջ քայլեր և ֆալանկայի դիմացը գումարուած Սերվիացեաց հետ պատերազմ մ'ըներ է։ Թշնամին իւր բռնած գիւրբերը թողլով ետ քաշուելու պարտաւորուներ է։ Միտհաթ փաշա խանն, ուր Սիւլէյման փաշա հասած է 10 վաշտ զորօք և թիւդանօթներով, Օսմանեան զօրաց ձեռքն անցեր է առանց պատերազմի։ Օղբ միգապատ ըլլաւն չէ գիտցուներ թէ թշնամին ո՛ր կողմ քաշւեր է։ Սերվիացիք հարկուրէ չափ մեռեալ ձգքեր են պատերազմի դաշտին վրայ։ Սիւլէյման փաշա մինչև Պապինա—Կլավա յառաջացեր է և Բանտօյա Գարուսիէն Սերվիա պիտի մտնէր։ Սլավոնան աղբիւրէ հեռագրաւորք անցեալները կը ծանուցանէին թէ Չէրնայէֆ Պապինա—Կլավան գրաւեց, չոր հիմայ թողլով ետ քաշուելու պարտաւորեցաւ։ Օսմանեան զօրաց ձեռք ոչխար, եղն, զէնք և ուրիշ աւարները անցան։ Ուրիշ յաղթութիւն մ'ալ Գարատաղեաց վրայ տարեր են կայսերական զօրքերը։

Նելչէն երկու զօրաբաժին և վի-
տինի կայսերական բանակին զօր-
բաժինները կողմնակի շարժման մ'ը-
կըսած են, որով Սերվիլացոյ դիվա-
ւոր բանակին ետեւը պիտի անցնին և
դայն պիտի պաշարեն : Սերվիլացիք
Թէհը-քէօյն և Աք-Փալանկան թո-
ղեր են, և շարժում մը կընեն որոյ
վախճանը տակաւին յայտնի չէ : Սէր-
տար—Էքրէմին հրամանաց ներքեւ
Սօֆիա կառմուսած բանակ մը Չէրնա-
յէֆիի դէմ պիտի կենայ : Ուստի մեծ
պատերազմ մ'իւ Օսմանեան զօրաց
կողմէն ընդհանուր շարժում մը պի-
տի ըլլար, որոյ վրայ տակաւին լուր
չկայ :

կըսուի թէ բազմաթիւ Ռուս զօ-
րականք և սպայք գիւղացիի զգեստոր-
րումանիոյ երկաթուղիներէն Սերվիա-
կանցնին : Միւս կողմանէ Աւստրիոյ
սահմանագլխէն Սերվիա շարունակ
կամաւորներ կը հասնին եղբր : Այս
նկատմամբ պատերազմը մեծ կարե-
ւորութիւն կառնու՝ գրեթէ ծպտեալ
կերպաբանաց ներքիւ . ուստի Բ .
Գիւռն ալ անոր համեմատ պատրաս-
տութիւնները կը մեծոյն . սպարա-
պետի դուռը կամաւորաց զինուո-
րագրութիւնը մեծ փութով առաջ
կը տարուի , և Պէյրօզի դաշտը բա-
նակ կը կազմուի : Արդէն բազմաթիւ
վաշտեր ալ ճանբայ երան պատերազ-

մի ասպարէզէն երթալու համար : Գը-
րիստոնեայ կամաւորաց խումբերուն
գրօշին վրայ Օսմանեան Մահիկին
ըով խաչ մը նկարուած է . գեղեցիկ
նշան միութեան թուրքիոյ խալամաց
և ֆրիատոնէից . միութիւն մը , որ
կրնայ թշնամիները կորագլուխ Ը-
նել : երբ աւելի մեծնայ և ընդար-
ձակի : Հայ կամաւորաց խումբը տե-
սանք , և կը ցաւինք որ տակաւին
խիստ սակաւ թիւն էին . ստուգիւ-
մբ փափաքը գաճաճ վաշտ մը տե-
նել չէր , մեք կը բաղձայինք մեծ գու-
մարտակ մը տեսնել , որ կարենայ
նաև պատերազմի գաշտին վրայ նը-
շանաւոր հանդիսանալ և ինքզինք
ցոյց տալ : Հայերն երկար ժամանակ
անդինութեամբ պատերազմական յատ-
կութիւնները կորուսած կը կարծը-
ուին . սիրելի էր մեզ տեսնել որ այս
կարծիքը գործնականացէս հերքուի :
Հայերը ծանր բռնուող ներքին և
հրդէհներու գլխաց իրենց ոյժն ու
կորովը հաստատած են , բայց այս
ուժն ու կորովն անփառունակ գոր-
ծերու մէջ կը վատնուի . ուստի ո՞ր
ազգասէր չփախաբիր որ փառաց աս-
պարիզին մէջ փայլի հայկական բազ-
կաց ազգեցյութիւնը : Աշխարհա-
ջերուն է . արքայութիւնը բռնուք
կը յարկշտակեն , և անոնք որ չեն
կրնար պէտք եղած ատեն քաջու-
թեամբ իրենց կենանքն իսկ զոհել ,
անկարող են նաև իրենց տունն ու
ընտանիքը պաշտպանելու : Երբ հա-
յերն ալ պատերազմին մէջ քաջագոր-
ծութեամբ փայլելով և տէրութենէն
պատիւ ու վարձատրութիւն ընդու-
նելով իրենց հայրենիքը դառնան ,
հարկաւ հասարակ արհեստաւորներէ
կամ գործաւորներէ աւելի յարգ և
համարում կը փայլեն : Առիթն այժմ
ներկայացած է , և կը յուսանք որ շա-
տեր պիտի փութան անկէ օգուտ քա-
ղելու :

Գարատաղի իշխանն երկրորդ յայտարարութիւն մ'ալ հրատարակեց։ Առաջինը Հէրսէլքլիններուն ուղղութեամբ էր, ուր կրէր թէ զանոնք դերութեան լուծէն ազատելու կողայ, իսկ երկրորդը Գարատաղիներուն ուղղութեամբ է միևնոյն բացադանալութիւններով։ Նիքօլա իշխանը Տաճկաց հնգադարեան բռնութիւնը պիտի վերցունէ։ Գարատաղի ժայռերուն վրայ ծածանած ազատութեան ու անկախութեան դրօշը բոլոր Սերվիական ազգին կը վերաբերի, կրէ. ասիկա բացատրութիւն մ'է որ կը նշանակէ թէ Գարատաղի իշխանը մեր ծակայ Օսմանեան գաւառացի ժողովուրդները Սերվիացի կամ Սլավ համարելով, իւր իշխանութիւնն անոնց վրայ տարածել կուզէ։ «Թուրքին դէմ կրօն, ղեմք սրտեբազմի հրաւիրողը մեր բնագլումն է, մեր սրբազան պարտաւորութիւնն է մեր եղբարց

նկատմամբ, որը յուսահատաբար կը մղեցին անտանելի վիճակէ մ'ազատելու համար ։ սարսափելի և անարժան վիճակ մը Աստուծոյ ստեղծուածոց ։ Ասկէ զատ Թուրքիոյ դէմ զմեզ պատերազմի պարտաւորողը նոյն իսկ Թուրքիա է ։ Եւրոպական տէրութիւնք ինչ որ կարող էին ըրին ապրտամբեալ ժողովրդեան վիճակին բարւոքում ձեռք բերելու և անոր խաղաղութիւնը վերագործնելու համար ։ ես ալ այս գործին մասնակցեցայ մեծ իշողութիւնեմբ, բայց Թուրքիա ոչ միայն այս ջանքերն իդերև հանձնեց, ապրատմբեալ դաւաճաց մէջ առաջւնէ աւելի նողկալի վիճակ մը յաջորդել տալով, այլ նաև Գարատապի նըկատմամբ ալ արգելիչ միջոցներ ձեռք առաւ, այն փոքրիկ երկիրն խաղաղութեան ու ամբողջութեան դէմ'ալ թշնամութիւն յայտնեց, Նիքոլա իշխանը կը ծանուցանէ թէ Գարատապի պատիւն ու ապահովութիւնն ոչ ևս կը ներէ այս վիճակին համբերել, և իւր "գիւցաղունքը" կը յորդորէ 'ի զէնէ դիմել" ։ "Մուրատ մը մեր երկրին տիրեց, կը յարէ 'ի վերջոյ, Մուրատի մը ձեռքէն զայն ետ պիտի առնունք, իթէ ճարտասանական դարձուածնեքով պատերազմ' վաստկուի, Նիքոլա իշխանին բացադանչութիւն ներն ալ կրնան գործնական օգուտ մ'ունենալ, բայց մինչև յարգ առնըւած հեռագրալուրբերը Գարատապիոց սլարտութեանէն զատ ուրիշ բան մը չ'մանողցին, և բացադանչական յայտարարութիւնն ստորագրող իշխանը տակաւին կարող չ'հաւա իւր "գիւցաղուններուն", յաղթանակներն հրատարակելու ։

Անցեցաւ շաբաթ առաւ Բ. Դուռը
գումարուած մեծ ժողովը տակաւին
հասարակաց ուշադրութեան առաւ
կայ ըլլալէ չ'դադրեցաւ ։ Ժողովին
մէջ իրիտ մեծ և կենսական խնդիր
ներ յուզուեցան ։ Բարձր. Մեծ—Եւ
պարբոսը թուրքիոյ կառավարական
դրութիւնը բարեօրոշելու և փարիզի
դաշնադրութեամբ Եւրոպիոյ մէջ
թուրքիոյ ստացած դրեց յարմարա-
վայն վիճակի և՛ հասոյնելու պէտքին
վրայ պնդեց ։ Նորին բարձրութիւնն
յայտարարեց թէ թուրքիա Եւրոպիոյ
համակրութիւնները պիտի կորուսա-
նէ եթէ Եւրոպական տէրութեանց
ներդաշնակութեան մէջ իրեն պէտք
եղած դրեց համեմատ ընթացք չ'բռ-
նէ ։ Բանի մը տարուան մէջ թուր-
քիա Եւրոպայէն 200 միլիոն ոսկի
փոխ առաւ , բայց մշտնջենապէս չա-
հաւոր կերպիւ չ'գործածեց զայն ,
և այսօր դժբաղդաբար ոչ չահր , ոչ
դարմանդուիլը կրնայ տալ ։ Բայց Ժա-
մանակէն բերեցան և հասարակային
պահանջմանց համեմատ բարեօրոշ կա-
ռավարական դրութիւն մը կրնայ ա-
մեն չարիք դարմանել և քանձալին

վարկը վերականգնել ։ Բարձր Միտհաթ փաշան ազդու կերպիւ օժանդակեց Մեծ—Էպսքըքոսին խօսքերուն, և սահմանադրական օրինաց պէտքը հաստատեց ։ Յետոյ Բումէլի Գաղապքերի Սէյֆէտտին Տէֆէստին խօսեցաւ, և հաստատեց թէ իսլամութիւնը բարենորոգմանց դէմ չէ, այլ անոնց կատարելապէս կը նպաստէ ։ Հասարակաց կրթութեան պաշտօնէի խորհրդականն Ջիսա պէյալ սահմանադրութեան պէտքը պաշտպանեց, և ըսաւ թէ Սպարէ—Աղիղի անկումն այս բարեկարգութեանց հրատարակութեան համար էր, բայց մինչև ցարդ դորձադրութիւնն յսպարդեալ ։ Իւլէմաներէն երկու հօգի քաղաքային և զինուորական պաշտամանց մէջ ֆրիստօնէից և Տաճկաց հաւասարութեան դէմ խօսեցան, բայց Բարձր Միտհաթ փաշան արժանապատիւ արտասրանաց և անոնք ալ սահմանադրական վարչութեան հաւանութիւն տուին ։ Իվրըշը Միտհաթ փաշան իւր պատրաստած ծրագիրը ներկայացուց, զոր տպել տալով ժողովականաց հաղորդելու որոշում տրուեցաւ ։ Նոր սահմանադրութեան մը հրատարակութեան յապաղումը մեծ բաժին մ'ունեցաւ ներկայ վիճակին ծանրանալու պատճառներուն մէջ, և կերեկի որ կառավարութիւնն ալ զայս զգալով, այս անգամ աւելի յօժարութիւն ցոյց կուտայ սահմանադրական վարչութեան սկզբունքն ընդունելու ։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոքրէշ 18 յուլիս.

Ծերակոյտն իշխանին ուղղուելիք ռա-
զերձն ընդունեց, որոյ մէջ իւր կոտոր-
եալ անձնութիւնք իւնը կը յայտնէ, և
արտաքին աշխարհավարութեան նկատ-
մամբ կը շնչոյն ան յայնտարարութիւնը
թէ Բումանիա իւր չափուց և Եւրոպիոյ
բազմաճանց համաժողովորդ շարունակէ
չէ-դրելովեան դըռնակին ներքև իսպառ-
չութիւնամբ իւր ներքին զարդացման աշ-
խատիլ :

Թուեալից 18 յուրիս.

Գտադրիական նաւախուճմըն այս առաջ
ւօտ մեկնեցաւ աստի 'ի Տրիպոլիս :

Պրիւսէ, 18 յուլիս:

Պէլճիոյ թագաւորն հիւանդ է :

ՊԱՏԵՐԱԶԴԻՄԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիսինէն յուրիս 6/18 թուով հե-
ռագիր մը հետեւեալ լուրը կ'ուտայ.

« Երեկ, երկուշաբթի, Սելենյանն փառայի հրամայած զօրաբանակն յառաջ խաղաղով, դեմը գտնուող սերվիացի զօրքն առանց պատերազմի Սերվիա քառուցեան Պապինա—կլավայի ճանքով, և տյալէս Պէլիրատո ճըգէն մինչև Սերվիոյ սահմանը ճանաչան բացուեցաւ :

«Ազ—Բաղնակայի առջև շարաթօրն Հաֆթը փաշային տարած յադ-թուլիւնն հաստատուեցաւ :

«Այս առաւօտ 18 վաշտ Սերվի-ական զօրք Զայլարէն մինչև իզվօր յառաջանալով Օսման փաշայի բռն-նամ գիրքերուն վրայ յարձակեցան : Ճակատամարտը տակաւին կը շարու-նակէ , բայց յաղթութիւնը թուրքաց կողմէ կերևի : Օսման փաշան արդէն 3 թնդանօթ , երկու սայլ ազգամածերք և 7 ձի առաւ :

Դարձեալ վիտինէն յուլիս 6/18 թուով :

«Սիւլէյման փաշան Սերվերն ետ մընէլէ ետև , որք Պապինա—կալայի գունէն Սերվիա կը փախչին , իւր ըն-թացքը շարունակեց Սերվիոյ վրայ : Իւր զօրաբանակն երեք գունդի բաժնեց , ալ գունդը Հասան փաշա-յին , ձախ գունդը Սէլամի փաշային և կէդրոնն իւր հրամանատարութեան ներքև :

«Սերվիացիք կատարելապէս յաղ-թուեցան Հասան փաշայէն Ազ—փա-լանկայի առջև : Հինգ ժամ պատե-րազմէ ետև իրենց գիրքերը , մեռ-եալներն ու բազմածիւ գէնք և ազգամածերք թողով ետ քաշուե-ցան :

Դարձեալ վիտինէն յուլիս 19 թը-ւով :

«Սերվիացիք Լէշիանին զօրու-պետն երէկ առաւօտ Օսման փաշա-յին վրայ յարձակեցաւ 15000 զօրք , որոց վրայ աւելցան , յետոյ 6000 մարդ :

«Պատերազմը խիստ սաստիկ ե-ղաւ , որոյ միջոցին Սերվիացիք եր-կու վաշտ զօրքն յառաջ քաշելու գնացին : Լէշիանին զօրապետը տեսնե-լով որ պատերազմը շարունակել ան-հրաժեշտ էր , ետ քաշուեցաւ : Հինգ թնդանօթ , բազմածիւ գէնք , ձիեր և ազգամածերք թողով :

Զայլարի առաւմը մօտաւոր տ է :

Դարձեալ յուլիս 19 թուով հե-ռագիր մը կը ծանուցանէ թէ երեք-շարթի օրը 3000 Սերվիացիք Ալալիէի մօտ Պօքօվիցա կոչուած տեղն Օս-մանեան զօրապետին մը վրայ յար-ձակեալ են , բայց յաղթութիւն փախեր են : 250 մեռեալ թողով , կայսերա-կան զօրաց կողմէն ալ մեռնողներ եղեր են , որոց մէջ են գնդապետի տեղակալ մը և Ալալիէի Միւլիթիւն , որ կռուին ներկայ կը գտնուէր :

Երեքշարթի իրիկուն Բ . Դուռն եկած հեռագիրեր կը ծանուցանեն թէ Շքօտարայի բանակին հրամանա-տար Ահմէտ Համիտ փաշան երէկ մեծ զօրութեամբ Դարաւաղ պիտի մտնէր :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական հրամանաւ :

Երբեմն Պօլսի կառավարիչ Բա-յիֆէ Էֆէնտին իւսթիալի կառավա-րիչ անուանեցաւ :

Պէրլինի Օսմ. դեսպանատան երկ-րորդ քարտուղար Յովսէփ Վ . Մի-սաք Էֆէնտին Հոսմի դեսպանատան առաջին քարտուղար անուանեցաւ , և այս աս թիւ Միւլթիմայիզի աստի-ճան տրուեցաւ իրեն :

Պուլաւայի մէջ Զէյթէններուն և Պաշլաբոզլուներուն գործած խժը-թութիւններն Սիւլէյման Երեսփոխա-նաց ժողովին մէջ հարցման նիւթ ըլ-լալով , Աիդղիոյ կառավարութիւնը ճիշտ տեղեկութիւնն ստանալու հա-մար քննիչ յանձնաժողով մը կար-գեց , որոյ անդամք են մայրաքա-ղաքի անդղիական դեսպանատան ներկայող քարտուղար Պ . Վալթէր

Պարինկ , և Ագրիանուպօլսոյ ու Ֆի-լիպէի Սիւլէյման հիւպատոսներն : Պ . Վալթէր Պարինկ երէկ առաւօտ Բուսէլի երկաթուղով Ագրիանու-պօլսի գնաց :

Բ . Դուռն ալ իւր կողմանէ մար-տատանց վերատեսուչ Բանի փաշան Բուսէլի գրկեց իրազօր իշխանու-թեամբ , որպէս զի գործուած խժ-դրութեանց վրայ քննութիւն բա-նայով յանդատները խստիւ պատ-ժէ :

Մեծ—Էպարքոսն հետեւեալ յայ-տարարութիւնն ուղղեց Օսմանեան կամաւոր զօրաց .

«Կը յսմ որ հայրենասիրական ոգով պատերազմի գնացող անկա-նոն զօրականաց մէջէն քանի մը չա-րաբարոյ մարդիկ աւագակութեան գործեր ընելու յանդգներ և իրենց ճանքուն վրայ գտնուող գիւղօրէից խաղաղ բնակիչները կեղեքեր ու կո-ղոպեր են :

«Ըստ որում անկանոն զօրաց պար-տականութիւնը պատերազմաց դաշ-տերուն վրայ երկրին պաշտպանու-թեան համար զինուորական ծառա-յութիւն միայն ընել է , եթէ մէջեր-նին գտնուին այնպիսի մարդիկ , որք ժողովրդոց դէմ շարութիւններ ու ոճիրներ գործելու յանգ գնին , իս-կոյն պիտի բռնուին և մահուամբ պատժուին :

«Այս պարագայից մէջ անոնց գը-լուկներն ու սպայները խստիւ պա-տասխանատու պիտի ըլլան իրենց հրամանին ներքև գտնուող մարդոց վարուցը :

1/16 յուլիս 1876 ՄԷՆՏՐԵՐ ՐԻՆՏՏԻ

Կրտսէի թէ զինուորական տրոց խնդիրը Բ . Դուռնէն լուծուելով ոչ—մահ-մետական ազգաց Պատրիարքարան-ներուն հաղորդուեր է :

Մեր խնայածին նայելով յիշեալ ասուրքին բաշխուած հետեւեալ կեր-պիւ որոշուեր է :

15 էն 75 տարու եղող ամեն ա-րու հպատակը զինուորական տուրք պիտի վճարեն 180 հոգիի վրայ 5000 զրջ բաժնուելու կերպիւ , որ ըսել է մարդ գլուխ 27 զրջ 30 վարա :

Այս կերպիւ , ինչպէս կը տեսնուի , 15 տարեկանէն վար տղայք և 75 տարեկանէն վեր ծերունիք ազատ կը մնան զինուորական տուրքէ , մինչ-դեռ ասկէ առաջ անոնք ալ ենթարկ-եալ էին :

Բ . Դրան այս տնօրէնութիւնն՝ ե-թէ ճշդիւ գործադրի՝ անշուշտ կըր-նայ դո՛հ ընել տուրք վճարողներն :

Պատրիէթ լրագիրը՝ կամաւոր զօ-րական գրուող Սօֆիաներուն կողմէ քրիստոնէսոյ կամաւորաց ուղղեալ ու-ղերձ մը հրատարակած է , որոյ մէջ Սօֆիաներն իբրև հայրենակից և զի-նակիր ընկեր ողնունելով զքրիստոն-եայս , սիրալիր ընկերակցութիւն կը խոստանան անոնց , և կը յայտնեն թէ իրենց կրօնական պարտականութիւն-ները կատարելու մասին բնաւ որ և է դժուարութիւն կամ արգելք չը պիտի գտնեն իրենց կողմէ : Միայն թէ կը լինի որ քրիստոնէայ կամա-ւորք ալ Շէրիի պահանջման համե-մատ զգոյշ կենան պատերազմին ժա-մանակ ոչ միայն իրենց հայրենակից-ները կեղեքելէ և բռնի սլարէն առ-նելէ , այլ և նոյն իսկ թշնամաց զա-ւակներուն կանանցն ու ծերոցը վը-նաս հասցնելէ :

Լուր կայ թէ Գարաւաղիք Բէ-քի նաւահանգստին Օսմանեան նա-ւերուն դէմ փոխուած ըլլան իմա-

նախնուն պէս՝ Հէրսէքցի սպարաւա-հետ միարանութեամբ Բիւքրէի նաւա-հանգիստը պահպանող Օսմանեան սակաւածիւ զօրականաց վրայ յար-ձակեալ և ամենն ալ անխնայ ջարդե-լով Բիւքը գրաւեր են :

Պէրլուտէն յուլիս 1/16 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սերվիացի պարտութիւններն ոչ ևս կը ծածկուին :

Բէշլիպէն ալ յուլիս 3/15 թուով հեռագիր մը կը ծէ Սերվիացի Սթ-րաթիմիթի զօրապետը բանտար-կուեր է :

Լա թիւրքի կը ծանուցանէ թէ երեքշարթի օրը յիսունի չափ յոյնք Մահմուդ ու խաչով նկարեալ կարմիր դրօշակ մ'առնելին ձգած Սպարա-պետի գուռը գնացեր են կամաւոր գրուելու :

Կը լսենք թէ Տիւրքի Միտհաթ փաշա և այլ քանի մը նախարարաց տիկնոջ կայսերական զօրաց համար նպաստի մասնաժողով մը կազմեր են , և առանց խորութեան թուրք Հայ և Յոյն տիկնանց գիւմըլ նպաստ պիտի հաւաքեն :

Խաթիբալ լրագիրը լուր կուտայ թէ թուրքացի Պէնայատ Մահմուտ փաշան իւր ծախքով չորս հազար կա-մաւորաց գունդ մը կազմեր է , որոց զգեստին և զինուոց ծախքն ինչպէս նաև պատերազմին բոլոր տեղու-թեան ժամանակ թոշակն իւր քա-կէն պիտի վճարէ :

Պրուսացին կը գրեն թէ Շէյխ Զապիթ անուն հայրենասէր էֆէնտի մը՝ կամաւորաց գունդ մը կազմելու ձեռնա ըկեր է՝ թուրքերէ Հայերէ և Յոյներէ : Յիշեալ գու՛նդը քանի մ'օ-րէն Կ . Պօլսի պիտի գայ :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՁԵՆՈՒՅՈՒՄՆ

Ֆիլիպէի Հասէթոյ առանէն հար-իւրի չափ մարդիկ՝ զինուոր գրուե-լով՝ Պուլաւ գիւղի մը մէջ աւարա-ւութեան գործեր ըրեր են , ուրիշ գիւղերու մէջ ալ առած նպարնուն գինը վճարել չուզելով՝ բռնութիւն-ներ գործեր են :

Կայսերական զօրաց դատերուն մէջ պատերազմելու այդ անարժան մարդոց վատ ընթացքը պատժոյ արժանի ըլլալով , զինուորական իշ-խանութիւնք փութացին բռնելին գանձք և զինաթափ ընելով դա-տաստանի ենթարկեցին : Դատաս-տանը տեսնուեցաւ , և այդ մարդոց գլուխը՝ Հաճի Մուրատ՝ ըստ օրինի մահուան դատապարտեցաւ , Հետե-ւաբար այս առաւօտ կախուեցաւ Ֆիլիպէի մէջ , իւր համախոհներն ալ հարցաքննութեան ենթարկուած են , և իրենց յանցանայ աստիճանին հա-մեմատ պիտի պատժուին :

Բ . Դուռն 7/19 յուլիս 1876

Կրտսէի 19 յուլիս	
Բուսէլ	41
Կոստ	1865 12 1/4
»	1869 11 3/4
»	1874 16 3/4
»	1872 20
»	1873 11 1/2
Երկուստ	38 5/8
Անգլ	96 5/16

ԼՈՍՏԱՆԻՆԱԿԵՂԼԵՆ
ԵՍԱՍՏԻՑ ՈՍՏՈՒՄԵԼԵ

7 յուլիս՝ Զօրքարթի իրիկուն 12.3
8 յուլիս՝ Հինգշաբթիի առաւօտ 12.3

Դարձեալ 4 ին 12.3

Կ . Պօլսի 7 յուլիս
Դարձեալ 4 ին 12.3
» 4 ին 12.3

Կ . Պօլսի Պատկար	2. 30
Կրտսէի Ժէնըրալ	2. 42
Կրտսէի Ոսթրալիա	3. 35 1/2
Կրտսէի Երկրագ	66
Կրտսէի 1863	67
» 1865	58
» 1869	20
» 1872	56
» 1873	4.

Կրտսէի 7 յուլիս

Կրտսէի Ժէնըրալ	140 20
Կրտսէի Ժէնըրալ	58 16
Կրտսէի Ժէնըրալ	89 20
Կրտսէի Ժէնըրալ	54 25
Կրտսէի Ժէնըրալ	408
Կրտսէի Ժէնըրալ	439

Ս. Զ. Գ. Ա. Յ. Ի.

ՀՐԱՆԻՐ ԱՌԱՋԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ

Ազգային ժողովը նիստ ունի յա-ռաջիկայ ուրբաթ յուլիս 9 ի Ղալա-թիւ :

Ատենը պիտի բացուի ճիշդ ժամ 6ին և դոցուի 10ին :

Հրաւիրեալ են Երեսփոխան Է-ֆէնտիններն՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փու-թով :

3 յուլիս 1876
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ . Պօլսի

ՊԱՏՐԻԱՐԿ Կ . ՊԵՆՏԵ
ՆԵՐՏԵՍ ԱՐԳԵՊԵՍԿՈՍ

ՕՐԱԿԱՐԳ

1. Վերաքննութիւն Սահմանադրու-թեան . — Վիճաբանութիւն Բ . յօդուածոց վրայ , որ է Թաղային մատակարարութիւն :

Ատենադպրար
Ազգային ժողովը
Կ . Յ . ՄԷԷ

Խարբերու հրաժարեալ առաջ-նորդ Գեր. Պետրոս վարդապետ Բագ-րատունի , որ Պատրիարքարանի կող-մէ Կ . Պօլսի կանչուած ըլլալով քանի մը շաբաթէ ի վեր հոս կը գտնուի , Ս . Պատրիարքին բաղքադիր տալով կը խնդրէ որ իւր դատախազներուն հետ դատ վարէ յատենի վարչու-թեան :

Այսպիսի օրինակ որ և արդար խնդիր մ'անշուշտ չլրնար մնալ :

Տիգրանակերտէն մեզ գրուած նամակ մը՝ Սիւրբէն եկած հեռա-գիրներէ առնելով կը ծանուցանէ թէ Խարդանու նախկին առաջնորդ Աս-լան Աբրահամ վարդապետ Սիւրբու-առաջնորդ Բօհանէն վարդապետին այցելութեան երթալով , սենեակի մը մէջ ի միտին նստած մինչև գիշեր օղի խմելէ ետև , մէջերնին վէճ ծա-գեր , և Ասլան Աբրահամ վարդապե-տըն ատրճանակով զարկեր է Բօհան-նէն վարդապետ :

Արդար խօսելով , մեր վարդա-պետներուն մէջ ատրճանակով զի-րար սպաննելու քաջագործութիւնը պակաս էր , ահաւասիկ այն ալ տես-նուի կ'սկսի : Երանի թէ ուրիշ հե-տեւողներ չունենար :

Նոյն քաղաքէն մեզ գրուած ու-րիշ բազմապատկեր նամակներ ալ սաստիկ դժգոհութիւն կը յայտնեն Տիգրանակերտի փոխ Առաջնորդ ֆի-լիպպոս վարդապետի դէմ , որ ան-խոհեմ և խռովայեղ ընթացքով տեղ-ւոյն ժողովուրդը պառակտելէ ու վրդովելէ զատ՝ ազգին պատիւը կոտ-րեր է կառավարութեան առջև (1) .

(1) Տասներկու ութամալ երեսով բազմապատկեր նամակ մը յիշեալ փոխ առաջնորդին ընթացիկ և գործող ման-բաման նկարագրութիւնը կընէ :
